

մասնորեն թվարկում է բոլոր հնարավոր տարբերակները՝ եթե հարսնացուի հայրը համաձայն չէ, մայրը համաձայն է, եթե փեսացուի ծնողները համաձայն չեն և այլն: Ասկա գալիս է երիտասարդի և աղջկա ծանոթանալու դեպքերի «գիտական դասակարգումը»: «Դուրսիցում ունենին առաջարկության հետևյալ ձևերը. 1. Զննողական հայացք, երբ դիմացինը հանդուժ է փոխադարձ ըմբռնման, 2. Միտ խորհրդանիշ խնձորի հանձնում, երբ այն ընդունողը վավերացնում է առաջարկությունը, 3. Շփումն իբրև սիրո առաջարկության միջոց, որի արտահայտման ձևերն են՝ ձեռքսեղմումը կամ թեք բռնելը. հասարակական պարահանդեսների ժամանակ «աղջկա ձեռք մտնելը» (ուզում է ասել թևանցուկ անելը — է. Կ.), աղջկա գլուխը կամ պարանոցը գրկելը. օրիորդի օձիքը բռնելը. աղջկա քսվելը տղային. հնագույն շրջանում փոխադարձ հոտոտումը..., որից ծագել է ծիսական համբույրը» և այլն (էջ 136—137):

Աշխատության վերջին՝ «Հոգևոր մշակույթ» գլուխը բաղկացած է երկու բաժնից՝ «Բանա-

հյուսություն, ժողովրդական երգեր, պարեր ու խաղեր» և «Հավատք»: Պետք է ասենք, որ շարադրման չհամակարգվածությամբ այս գլուխը ևս չի տարբերվում նախորդ գլուխներից: Այստեղ էլ հեղինակը չի բավարարվել առանց «սենսացիոն» հայտարարությունների. «Ուսումնասիրություններից (ո՞ր—է. Կ.) պարզվում է, որ Ակլատիզը փոխարինել է բնության մեռնող նար աստվածուհուն և, իբրև այդպիսին, նախորդել է Արա Գեղեցիկին» (էջ 193), «... աղը պահվում էր Անահիտ դիցուհուն պատկերող կանացիակերպ կավե աղամանների մեջ: Ամենայն հավանականությամբ, հին հայերը աղը համարել են Անահիտի պարգևը» և այլն: Հետաքրքիր կլինեն իմանալ, թե հեղինակին ի՞նչ նյութեր են թույլ տվել նման դատողություններ անել:

Վերոհիշյալ թերությունները թույլ չեն տալիս բնարկվող գիրքը հաջողված գործ համարել:

Պատմ. գիտ. դոկտոր է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՏՂԱ, Բանաստեղծություններ և պոեմներ. աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972, 451 էջ, գինը՝ 1 ռ. 83 կոպ.:

Մատենադարանը ընթերցողի սեղանին է գրել իր հերթական հրատարակությունը՝ «Գրիգոր Տղա...»: Հայտնի անուն է Գրիգոր Տղան մեր պատմության և ծանոթ դեմք՝ մեր մատենագրության մեջ: Սակայն կարողում ենք հատորը ու պարզվում է, որ որքան հայտնի էր մեզ Գրիգոր Տղա եկեղեցա-քաղաքական գործիչը, այնքան անհայտ էր մնացել Գրիգոր Տղա բանաստեղծը: Սակայն գնահատելու համար նոր լույս տեսած այս հատորը, նախ պետք է պարզել, թե ինչ էր հայտնի ցարդ Գրիգոր Տղա բանաստեղծից: Սույն հատորում Գրիգոր Տղան ներկայացված է չափածո գործերի 19 միավորով: Դա այն ամենն է, ինչ տարիների պրոպագանդայով հայտնաբերել է ուսումնասիրողը: Այդ շարքի մեջ է նաև «Ահա ձայնեմ ձայն ողբապին» պոեմը, որ այլ կերպ կոչվում է «Ողբ Երուսաղեմի» և որի մասին կխոսենք առանձին. մնում է 18 միավոր: Այս 18 միավորից մեկը՝ «Յորժամ զիս ինձէն գտայ» ընդարձակ բանաստեղծությունը ունի 162 տող, որից 16 տող սկզբից՝ տպագրվել է զեռու 1893 թ., մնացած 136 տողը տպագրվում է առաջին անգամ: Մնում է 17 միավոր. ահա այդ 17 միավորից 14-ի դիմաց ևս գրված է. «Հրատարակ-

վում է առաջին անգամ»: «Ողբ Երուսաղեմի» պոեմը առաջին անգամ (որ ցարդ միակն էր) հրատարակել է է. Դյուլորիեն, ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ: Վերջինիս օգտագործած ձեռագրերում բնագիրն ունեցել է 2395 տող: Այդ ինքնին պակասավոր բնագրում է. Դյուլորիեն ևս կրճատումներ է արել և տպագրել է 1489 տող: Սույն հրատարակության մեջ պոեմը, իր հիշատակարանով, ունի 2912 տող: Ի՞նչ այսպես, Գրիգոր Տղայի բանաստեղծական մեղ հասած ժառանգությունը կազմում է 7709 տող, որից մինչ այժմ հրատարակված է եղել ընդամենը 1607 տող, մնացած 6102 տողը հրատարակվում է առաջին անգամ՝ Աս. Մնացականյանի ջանքերով: Ուրեմն իրավամբ կարող ենք ասել, որ Գրիգոր Տղա բանաստեղծը ստացավ իր երկրորդ ծնունդը, և դա շատ լավ նվեր էր Գրիգոր Տղայի ծննդյան 840-ամյակին, որ լրացավ 1973 թ.:

Գրախոսվող հրատարակությունը կազմված է փոքրիկ «Առաջաբանից» ու երեք մասից. ա) «Գրիգոր Տղա», բ) «Բանաստեղծություններ և պոեմներ» (այսինքն՝ բնագրերը) և գ) «Ծանոթագրություններ»: Վերջին բաժնում շատ սեղմ ձևով հայտնվում են լրացուցիչ,

քայքայ անհրաժեշտ տեղեկություններ բնագրական յուրաքանչյուր միավորի վերաբերյալ: Նրկորդ մասի ձեռագրագիտական-բնագրագիտական կողմին չենք անդրադառնա: Նշենք միայն, որ հրատարակիչը մեր անվանի ձեռագրագետ-բնագրագետներից մեկն է և ինչպես իր նախորդ հրատարակություններում, այնպես էլ այս դեպքում, բնագրերը ներկայացված են, ընդհանուր առմամբ, գիտական պատշաճ մակարդակով: Գրախոսության ընձեռած սահմաններում կանգնողա՞նք առաջին մասին և բնագրերին, այսինքն՝ բանաստեղծություններին ու պոեմներին, սակայն վերջին դեպքում ևս բոլոր հարցերը չէ, որ կդառնան քննության առարկա:

Առաջին մասը՝ «Գրիգոր Տղա» վերնագրով, սովորական առաջարան չէ համառոտ ու սեղմ տեղեկություններով հեղինակ, գործի ու ձեռագրերի մասին, որ որպես կանոն կցվում են նման հրատարակություններին, այլ բավական ընդարձակ մի ուսումնասիրություն է (էջ 9—175), մենագրություն՝ նվիրված Գրիգոր Տղայի կյանքին ու գործին, որի մեջ սեղմ գծերով անդրադառնալով Գրիգոր Տղա եկեղեցա-քաղաքական գործչին, Աս. Մնացականյանը ընդարձակ քննությամբ ու հանդամանալից վերլուծությամբ ներկայացնում է Գրիգոր Տղա բանաստեղծին, մի բան, որ ուսումնասիրողի հիմնական խնդիրն է եղել:

Աս. Մնացականյանը, մի դեպքում դիտում է Գրիգոր Տղային ինքյամբ, ցույց է տալիս, թե ինչ է իրենից ներկայացնում Գրիգոր Տղա բանաստեղծը՝ վերլուծվում ձև, խմբավորված ձևով, նրա բանաստեղծություններն ու պոեմները, բացահայտվում դրանց դասակարգական բովանդակությունը, հասարակական-քաղաքական ու կրոնա-եկեղեցական էությունը, բանաստեղծական արվեստը և այլն: Մյուս դեպքում՝ որոշվում է Գրիգոր Տղայի տեղը հայ միջնադարյան գրականության զարգացման ընթացքի մեջ, և այդ նպատակով է, որ մեր բանաստեղծության առաջընթացի համառոտ ակնարկ է տրվում սկզբից մինչև ուշ միջնադար: Մական շարունակելուց առաջ արձանագրենք մի փաստ: Աս. Մնացականյանը, որոշելու համար Գրիգոր Տղայի տեղը գրական-պատմական կյանքում, վերցնում է միայն և միայն հայ միջնադարյան գրականությունը: Մինչդեռ ուսումնասիրությունը, որ արժեքավոր է ոչ միայն Գրիգոր Տղայի բանաստեղծական ժառանգության հայտնաբերման ու գնահատման, այլև միջնադարյան հայ գրականության պատմության համար ընդհանրապես, մեծապես կշահեր, անկասկած կշահեր նաև ընթերցողը, եթե լայնացվեր գիտարկման տեսադաշտը հայտնաբերողների ընդգրկմամբ: Եվրոպայում,

որի հետ սերտ ռազմա-քաղաքական, կրոնա-եկեղեցական ու տնտեսական հարաբերությունների մեջ էր կիլիկյան հայկական իշխանապետությունը, Գրիգոր Տղայի ժամանակ ուշագրավ տեղաշարժեր էին կատարվում թե՛ հասարակական-քաղաքական և թե՛ գրական կյանքում: XII դարի եվրոպական գրականության, մասնավորապես բանաստեղծության համեմատությունը հայ գրականության, ի մասնավորի բանաստեղծության հետ, անշուշտ, կնպաստեր և հայ գրականության մեջ տեղի ունեցող որոշ նրկայներ ավելի խորը բացատրելու և Գրիգոր Տղայի ժառանգությունը գնահատելու գործին: Ասածս, սակայն, չի վերաբերում միայն գրախոսվող ուսումնասիրությանը: Միջնադարյան մեր բանաստեղծների գործերի հրատարակությունների համար այդպիսի մոտեցումը գրեթե ավանդույթ է դարձել: Գրախոսվող հրատարակության հեղինակը, որ սովորաբար նորի ջատագով է, այս դեպքում պարզապես գնացել է ավանդական ուղիներով:

Արդ, ինչպես է գնահատում ուսումնասիրողը Գրիգոր Տղայի բանաստեղծական ժառանգությունը և ինչ տեղ է հատկացնում նրան մեր միջնադարյան գրականության, մասնավորապես՝ բանաստեղծության զարգացման ընթացքի մեջ: Գնահատման խտացված ձևակերպումը տրված է արդեն առաջին էջում, հեղինակային «Առաջարանի» մեջ. «Գրիգոր Տղան ոչ միայն շարունակում է իր նախորդների՝ Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մաղիստրոսի, Ներսես Շնորհալու և ուրիշների լավագույն ավանդները, այլև զարգացման մի նոր աստիճանի է բարձրացնում մեր գրավոր բանաստեղծությունը: Եթե մինչև օրս յուրատեսակ անջրպետ էր նկատվում Ներսես Շնորհալու և մեր աշխարհիկ գրականության անդրանիկ խոշոր ներկայացուցիչների (Հովհաննես Երզնկացի-Պլուզ, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Խաչատուր Կեղանցի և այլն) միջև, ապա Գրիգոր Տղան իր բանաստեղծություններով դալիս է վերացնելու այդ անջրպետը: Եվ քանի որ Ներսես Շնորհալու ժառանգությամբ ավարտվում է մեր նին դասական պոեզիան, և Երզնկացիներով ու Ֆրիկով սկսվում է մի նոր դարաշրջան, ապա Գրիգոր Տղան այդ սահմանի վրա նրկան է դալիս որպես բացառիկ դեմք, որի ստեղծագործությունների մեջ, թերևս հավասարապես, առկա են և՛ հինը, և՛ նորը:

Գրիգոր Տղան, որպես նոր բանաստեղծության ներկայացուցիչ, աչքի է ընկնում հատկապես իր շոշափած հարցերով, խնդիրների բնագավառը բերած հասարակական թարմ խնդիրներով, քաղաքական-սոցիալական տրամադրություններով, ինչպես նաև բանաստեղծական խոս-

րի նոր ձևերով» (էջ 5—6, ընդգծումները իմն են—Խ. Թ.):

Առաջարկելով «բացառիկ» բառի փոխարեն ավելի թույլ շեշտ ունեցող բառ և Գրիգոր Տղայի կապակցությամբ «նոր» բառը հաճախ գործածելուց ձեռնպահություն, անցնենք այս չափազանց հետաքրքրական հատվածի հիմնական մտքերին.

1. Ներսես Շնորհալու ժառանգությամբ ավարտվում է մեր հին դասական պոեզիան:

2. Գրիգոր Տղան զարգացման մի նոր աստիճանի է բարձրացնում մեր պրավոր բանաստեղծությունը:

3. Գրիգոր Տղան մեր նոր բանաստեղծության ներկայացուցիչն է (ենթադրվում է՝ առաջին ներկայացուցիչը): Եթե Ներսես Շնորհալու ժառանգությամբ, իրոք, ավարտվում է մեր հին դասական պոեզիան, ապա Երզնկացիներով ու Ֆրիկով սկսվող նոր դարաշրջանի սահմանի վրա ինքնաբերաբար կանգնում է Գրիգոր Տղան՝ որպես մեր նոր բանաստեղծության (առաջին) ներկայացուցիչ: Սակայն հայտնի է, որ Մ. Արևելյանը մեր գրականության մի շրջանը ավարտված է համարում նարեկացիով և նոր շրջանը (անկախ նրանից, թե ինչպես է կոչում նա այդ շրջանը), սկսում է Գրիգոր Մազիստրոս—Հովհաննես Իմաստասեր—Ներսես Շնորհալի գծով, ըստ որում իրական սահմանագիծը, ըստ էության, համարում է Շնորհալու ստեղծագործությունը, և այս նոր շրջանը, մի առիթով ու հենց Շնորհալու կապակցությամբ, կոչում է շատ ավելի ճիշտ բառով, քան «վերածնություն» բառն է, այն է՝ աշխարհիկ ոգով վերածնում: Եթե մեր բանաստեղծության այս շրջանը «նոր» անվանելով ըմբռնենք հենց աշխարհականացման իմաստով, ապա այդ պրոցեսի սկզբում, որպես առաջին խոշոր դեմք կանգնած է, իրոք, Շնորհալին, և նրանով ոչ այնքան փակվում է ինչ-որ շրջան, որքան սկսվում է նոր շրջան: Սակայն այստեղ մեր նպատակը այդ հարցի քննարկումը չէ, ուստի նշենք միայն հետևյալը: Անկախ նրանից, թե Շնորհալու համար ինչ տեղ է որոշում ուսումնասիրողը, մի քան ակնհայտ է, մեր բանաստեղծության զարգացման պատմության մեջ սահման նշող որևէ գիծ չի կարող անցնել Ներսես Շնորհալու ու Գրիգոր Տղայի միջև. այդ գիծն այնպես է անցնում, որ նրանք երկուսով միասին են մնում գծի մի կողմում: Գրիգոր Տղան Ներսես Շնորհալու անմիջական շարունակությունն է ոչ միայն կաթողիկոսական դահլիճի վրա, այլև գրական մարդում: Բայց եթե կաթողիկոսական դահլիճի վրա նա իր նախորդից որոշ հարցերում ու որոշ չափով առաջ անցավ, ապա նույնը չի կա-

րելի ասել նրա մասին գրական ասպարեզում: Շնորհալիով է սկսվում (Մազիստրոս—Իմաստասեր որոշ անցումով հանդերձ) զարգացած Ֆեոդալիզմի դարաշրջանի հայկական պոեզիան, ու Շնորհալուն են պատկանում նոր բանաստեղծության մատյանի առաջին մեծ էջերը: Գրիգոր Տղան, իր նախորդի ձեռագրի նմանողությամբ, այս մատյանին ավելացնում է ևս մի քանի էջ: Ինչպես իրավացիորեն նշում է Աս. Մնացականյանը, «Ներսես Շնորհալին, եկեղեցական երգերից... բացի, գրել է նաև ընդհանուր, ոչ եկեղեցական բնույթի բազմաթիվ բանաստեղծություններ: Գրիգոր Տղայի համեմատաբար փոքրածավալ բանաստեղծությունները հանդիսանում են նշված ստեղծագործությունների շարունակությունը և նրանց նորորակ զարգացումը: Ներսես Շնորհալու «Ողբ Եղեհիսի» պոեմի անթիստևի հետևությամբ է ստեղծված Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմի» պոեմը» (էջ 142, տե՛ս նաև էջ 143): Այս բացատրությունից հետո մենք արդեն կարող ենք ասել, որ միանգամայն իրավացի է Աս. Մնացականյանը, և իրավացի՝ այն տեղը, որ նահատակացնում է Գրիգոր Տղային մեր բանաստեղծության պատմության մեջ, երբ գրում է. «Եթե մինչև օրս յուրատեսակ անջրպետ էր նկատվում Ներսես Շնորհալու և մեր աշխարհիկ գրականության սնդրանիկ խոշոր ներկայացուցիչների (Հովհաննես Երզնկացի-Պլուզ-Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Խաչատուր Կեչառեցի և այլն) միջև, ապա Գրիգոր Տղան իր բանաստեղծություններով զալիս է վերացնելու այդ անջրպետը» (էջ 5, տե՛ս նաև էջ 83, 101, 147 և այլուր): «Գրանով էլ.— գրում է Աս. Մնացականյանը,— Գրիգոր Տղան հանդիսանում է մեր միջնադարյան բանաստեղծական խոսքի ընդհանուր պատմության կարևոր օղակներից մեկը» (էջ 101):

Աս. Մնացականյանը իր ուսումնասիրության մեջ (ինչպես և մենք սույն գրախոսականում) հաճախ գործածում է «հին» և «նոր» բանաստեղծություն արտահայտությունը: Նա այստեղ կոնկրետ չի սահմանել, թե ինչ նկատի ունի դրա տակ: Չնայած դրան, ամբողջ ուսումնասիրությունից ակնհայտ է, որ նոր բանաստեղծությունն ասելով՝ նա նկատի ունի այն բանաստեղծությունը, որը (ինչպես նշում է ինքք վերջերս հրատարակված իր հոդվածներից մեկում) կոչված էր արժեքավորելու կրոնի կողմից մերժված մարդ և բնություն հասկացությունները և հոգևոր զաղափարների կողքին կամ փոխարեն պատշաճ տեղ հասկացնելու աշխարհիկ ու երկրային զաղափարներին, և որ Ներսես Շնորհալու շնորհիվ «հայ պոեզիան թեկնածու» իր զարգացման աշխարհը

փուլը, որին ամենից շատ պատշաճում է աշխարհականացումը՝ բնութագրելով: Ճշմարիտ է միտքը ու գիտական՝ բնութագրումը, և ներսես Շնորհալու ու Գրիգոր Տղայի կապակցությամբ ռուսական գրականության արտահայտությունը գործածելով, մենք էլ ուսումնասիրողի հետ միասին, նկատի ունենք մեր բանաստեղծության՝ ըստ էության Շնորհալուի ակադեմիկոսի աշխարհականացումը, աշխարհականացող բանաստեղծությունը: Սակայն բացատրության կարիք ունի այն հարցը, թե ինչու չունենինք աշխարհիկ բանաստեղծություն և ինչու աշխարհականանում էր եղածը, և ոչ թե օտարացում այն որպես ինքնուրույն թե՛ դուզահու գոյություն ունեցողին: Դա կարևոր է ոչ միայն մեր գրականության զարգացման պատմության, այլև ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և այլոց դերը նրանում ավելի ճիշտ պատկերացնելու համար: Քրիստոնեական Հայաստանի գրավոր բանաստեղծությունը (գրականությունն ընդհանրապես) ունեցել է երկու թև, երկու ճյուղ՝ աշխարհիկ-ազնվականական և հոգևոր-եկեղեցական (հասկանալի է՝ երկուսն էլ ֆեոդալական): Առաջին ճյուղը չզարգացավ, չծաղկեց. զարգացավ ու ծաղկեց երկրորդը՝ հոգևոր-եկեղեցական ճյուղը: Այս վերջինի՝ մինչև Գրիգոր Տղա, անցած ուղու թևե համառոտ, բայց հավաստի պատկերը տրված է գրախոսվող ուսումնասիրության մեջ: Բացատրության կարիք ունի այն հարցը, թե ինչու չզարգացավ աշխարհիկ-ազնվականական բանաստեղծությունը: Պատասխանը, հարկավ, պետք է փնտրել պիտություն-եկեղեցի հարաբերության և աշխարհիկ կյանք-հոգևոր կյանք հասկացությունների՝ տիրապետող գաղափարախոսության ըմբռնման մեջ: Հայկական կյանքի պատմության բերումով եկեղեցին գնալով ուժեղանում էր, իսկ պիտական իշխանությունը՝ թուլանում: Մի փաստ էր դա, որ պիտության թեկնածուական մեկնարանությունների պարարտ հող էր մատակարարում ու եկեղեցու հավակնությունները սնում: Նույն այդ իրերի բերումով հայկական կենտրոնացված բազմապիսի կյանքի փաստը ավելի հաճախ ու ավելի տեականորեն, դժբախտաբար, եկեղեցին էր, քան աշխարհիկ իշխանությունը. այս մի կողմից: Մյուս կողմից. եկեղեցու ազդեցությունը ժողովրդի վրա պայմանավորված էր ոչ միայն նրա բազմազան ազդեցիկ դիրքով, տնտեսական հզորությամբ, որ զխավորն էր անշուշտ, այլև այնու, որ նա էր ժողովրդին գաղափարական մշակման հնարավոր միակ պաշտոնական հաստատությունը: Կրթական-լուսավորական գործը եկեղեցու մենաշնորհն էր: Մինչև ուշ միջնադար Հայաստանում չկային դպրոցներ եկե-

ղեցուց դուրս ու նրանից անկախ: Հոգևորականությունը իր գործունեության, մասնավորապես կրթական-լուսավորական ու գրական գործունեության մեջ ղեկավարվում էր, բնականաբար, իր կրոնի դոգմատիկայով: Սակայն հայտնի է, որ քրիստոնեությունը մերժում է մարմինը և հաստատում հոգին, ըստ այդմ՝ ժխտում է երկրային կյանքը և հաստատում հանդերձյալը: Մերժելով մարմինն ու երկրային կյանքը, եկեղեցին, բնականաբար, մերժում էր նաև նույն այդ մարմնի ու աշխարհական կյանքի բանաստեղծական արտահայտությունը: Եվ մինչև մի որոշակի դարաշրջան դա հաջողվում էր եկեղեցուն: Հինգ այս պատճառով մեզանում չզարգացավ աշխարհիկ-ազնվականական կամ աշխարհիկ գրավոր բանաստեղծությունը, և տիրապետող գերազանցապես հոգևոր-եկեղեցական բանաստեղծությունն էր: Այս պայմաններում, ինքնին հասկանալի է, որ մեր բանաստեղծության մեջ կատարվող տեղաշարժերը պետք է տեղի ունենային հոգևոր-եկեղեցական բանաստեղծության մեջ: Աշխարհիկ գրավոր բանաստեղծությունը եկեղեցին ճնշում, մերժում էր ամեն կերպ, այդ թվում իր՝ հոգևոր բանաստեղծությամբ: Այս կապակցությամբ շափազանց ուշագրավ է Կ. Մարքսի հետևյալ միտքը. «Духовенство в южной Франции занималось библейской поэзией и верным пересказом поэтически-повествовательной части священного писания... С поэзией светских (провазсальских) поэтов боролись с помощью поэзии библейской»¹:

Կ. Մարքսի այս միտքը ճշմարիտ է նաև Հայաստանի ու հայկական բանաստեղծության համար, որովհետև նույն երևույթը տեղի էր ունենում նաև Հայաստանում: Այստեղ ևս աշխարհիկ բանաստեղծության (գրավոր) զարգացումը արգելակում, այն ճնշում ու մերժում էին նաև բիրտական բանաստեղծության օգնությամբ. «Յիսուս Որդի» ու բազմաթիվ նման հոգևոր-եկեղեցական բանաստեղծություն-պոեմների ֆունկցիոնալ նշանակությունը նաև այդ էր: Սակայն եկեղեցին աշխարհիկ բանաստեղծության դեմ պայքարում էր ոչ միայն հոգևոր բանաստեղծությամբ, այլև ազդեցության շատ ավելի զորեղ միջոցներով: Եկեղեցին սրով ու հրով վերացրեց արիստոկրատիան ու նրանց հետ նաև պրովանսալյան պոեզիան, Հայաստանում այդ ժամանակ նման մասսայական շարժում չկար, հակադրվողները անհատներ էին, բայց նրանք նույնպես հալածվում էին:

¹ См. К. Маркс, Ф. Энгельс, Архив, Соч. 1:

Հիշենք սիրո, լույսի ու առավոտի մեր անդու-
ղական երգչին, որին եկեղեցին հալածում էր
հենց նրա համար, որ նա երգում էր սեր, լույս
ու առավոտ.

Նա կէսը մ'ասեն՝ 'հա է
յիմար ու խե մաղաւ կաթել,
Ու կէսը մ'ասեն, թե՛ Պարտ
է դայսպիսոյս արիւնն հեղել:

«Անփակ բերանները» հանդիմանել ու պա-
խարակել են նույնիսկ Ներսես Շնորհալու, միայն այն բանի համար, որ նա աշխարհիկ, սիրո երգերի (անդիր բանաստեղծության) շա-
փերն է դործածել. թեև այդ չափերով գրված գործերը ղուտ կրոնական բովանդակության են («Բան հաւատոյ», «Ողբերգութիւն»)՝ Այդու-
հանդերձ կյանքը առաջ էր գնում: Հենց Շնոր-
հալու ու Տղայի ժամանակ Եվրոպայում արագ
թափով զարգանում էր բնության ու կյանքի, ղուտ աշխարհիկ սիրո պոեզիան՝ տրուբադուր-
ների, տրուվերների, միննեզինգերների ու վա-
զանտների պոեզիան, որ իր մի մասով ազնվա-
կանական-պալատական էր, մի մասով՝ հակա-
եկեղեցական-հակապալատական, և վերջապես, մի
զգալի մասով էլ արտահայտությունն էր վերելք ապրող բաղաձայնների՝ դեմոկրատական
խավերի տրամադրությունների: Եկեղեցին որ-
քան էլ ուժեղ լինէր, այնուամենայնիվ չէր կա-
րող կասեցնել կյանքի առաջընթաց զարգացու-
մը: Արտադրողական ուժերի, ապրանքա-դրա-
մային հարաբերությունների, առևտրի ու ար-
հեստագործության զարգացումը, բաղաձային
կյանքի աշխուժացումն ու վերելքը իրենց
դրոշմն էին դնում կյանքի բոլոր բնագավառ-
ների վրա, այդ թվում նաև բանաստեղծության: Աշխարհիկ կյանքը, կամ գեթ աշխարհիկ տրա-
մադրությունները չէին կարող չթափանցել բա-
նաստեղծության մեջ: Այդ տրամադրություննե-
րը գնալով ուժեղանում են ու դառնում հոգե-
կան-գեղարվեստական բավարարություն պա-
հանջող կյանքի անհրաժեշտ ու հստակ ձևա-
կերպված թելադրանք.

Եղբար, մի կան հետ մեղ սիրով,
Աշխարհի բան ուղեն գրողով.
Նա ես վասն այն յայտնի ձայնով
Սիրու բաներս ասցի յոլով²:

² Կ ո ս տ ա ն դ ի ն Ե Ր Ղ Ն Կ ա ց ի, Տաղեր,
աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի,
Երևան, 1962, էջ 183:

³ «Բանք շափաւ», Վենետիկ, 1830, էջ 223,
163, նաև Մ. Արևիկյան, Երկեր, հատ. Գ,
Երևան, 1970, էջ 107—108:

⁴ Կ ո ս տ ա ն դ ի ն Ե Ր Ղ Ն Կ ա ց ի, Նշվ.
աշխ., էջ 164:

Սա XIII դար է, Գրիգոր Տղայից շուրջ մեկ
դար հետ, բայց այս պահանջը՝ գրով աշխար-
հի բան ունենալու ցանկությունը, պետք է ե-
ղած լիներ արդեն նրա ժամանակ: Ու չնայած
դրան, Շնորհալու և Տղայի ժամանակ Հայաս-
տանում չկա ոչ տրուբադուրների ու տրուվեր-
ների և ոչ էլ վազանտների ու միննեզինգեր-
ների պոեզիան: Աշխարհիկ բարձրագույն իշ-
խանությունը թե՛ հյուսիս-արևելյան Հայաստա-
նում և թե՛ Կիլիկիայում զբաղված է գերա-
զանցապես ռազմա-քաղաքական հարցերով՝
երկիրը օտար տիրապետությունից ազատագրե-
լու կամ բաղամթիվ թշնամիների բաղամթիվ
հարձակումներից պաշտպանելու կենսական
հոգսերով: Իշխանապետներն ու իշխանները
նպաստում են դիտա-կրթական գործին, բայց
այդ գործի նյութական-տնտեսական կողմն ա-
պահովելով միայն: Կա աշխատավոր զանգված-
ների ամենօրյա տուտունջն ու բողոքը, բայց
չկա նրանց, մանավանդ ֆաղաֆաբնակչության,
սոցիալական հումկու շարժում, որ համապա-
տասխան ուղղություն տա նաև բանաստեղծու-
թյանը: Գրիգոր Տղայի համար տիպակա-
նը դեռ բիրտական պոեզիան է (հայրե-
նասիրության ու սոցիալական մոտիվների մա-
սին կասենք): Մեր դեմ կանգնած է ոչ միայն
անկեղծ հավատացյալը. այլև ջերմհոանդ կրո-
նավորը: Պաշտամունքի կատարման ժամանակ
նա շշնջում է պաշտոնական աղոթքները, դրա-
նից ապա ժամերին աստծուն է դիմում իր
սեփական աղոթքներով, որովհետև նրա բա-
նաստեղծությունը իր զգալի մասով դեռ աղոթք
է. այն տարբերությամբ, որ աշխատում է
նմանվել նարեկացուն: Ու որքան էլ տարբեր
է նրանց արվեստը, ոգու խորությունն ու մտքի
թուխքը, սակայն նույնն է միտումը՝ աշխարհի
ու մարմնի ժխտմամբ հասնել հոգու փրկու-
թյանը, ինքնաձաղկման ու ինքնամերժման
ձանապարհով հասնել մաքրագործման ու դրա-
նով՝ աստծուն:

Գրիգոր Տղան պատրաստ է «անձանձիր համ-
բերելու, առանց երկբայության խնդրելու» մին-
չև ստանա խնդրածը (էջ 378): Այդուհանդերձ,
նա երկրայում է, որ մարդու նախածին մեղ-
րի, մարդկանց թե իր անձնական մեղքերի
պատճառով, աստված կարող է և չտալ խնդրա-
ծը.

Մի՞թէ հաց խնդրելով թերամիտ մանուկս
Քար առնուցում (էջ 378):

Սակայն տեղնուտեղը մերժում է այդ կաս-
կածները. «Եւ ոչ երբէք» — ասում է նա, որով-
հետև «այս և ոչ առ շարքս գործի»: Եվ, ան-
շուշտ, նուրբ ու խոր միտք է հայտնում

Աս. Մնացականյանը, երբ գրում է, թե Գրիգոր Տղան «աստծուն պարտագրում է ներումն և բարյացակամություն» (էջ 123): Սակայն պետք է նկատել, որ դա ավելի շուտ հասարակական պահանջ էր, որ ձեակերպում է Տղան, բան անձնական հայցում, որ ներկայացնում է նա: Իսկ եթե շատված, այնուամենայնիվ, զլանում է ներել կամ բարյացակամ լինել: Բանաստեղծը իրավացիորեն հարցնում է.

Մի՞թէ զուր՝ առ իս՝ արիւնդ,
Մի՞թէ ունայն՝ մահդ,
Մի՞թէ անօգուտ խաչն (էջ 378),

Մեծ տարողության հարցադրում է, որն անձնականից առավել հասարակական խորք ունի:

Գրիգոր Տղան այն բանաստեղծը չէր, որ կոչված էր խորացնելու կասկածը, նա եկել էր փառատելու այն, ուստի վճռականապես պատասխանում է. «Եւ ոչ երբէք»: Անձնական համոզմունք է սա. հավանաբար, բայց և սոցիալական պատվեր, որ օբյեկտիվորեն կատարում է նա: Քրիստոսություն կլինի, մնում է համոռնի և պահանջել, այլ ուղի չկա, — մեկնարանելով այս բանաստեղծությունը, իրավացիորեն գրում է Աս. Մնացականյանը (թեև «պահանջել» բառի փոխարեն ավելի ճիշտ կլիներ «սպասել» բառը, էջ 123): Նշենք նաև, որ Գրիգոր Տղայի բանաստեղծությունների այս շարքին նվիրված էջերը Աս. Մնացականյանի ուսումնասիրության չավագույն էջերից են:

Քանի որ խոսք բացվեց Գրիգոր Տղայի բանաստեղծության սոցիալական մոտիվների մասին, անդրադառնանք այժմ դրան: Այս տեսակետից հատուկ ուշադրության է արժանի Հեթում Սեաստոսի խնդրանքով գրված «Յիսուս Քրիստոս, Որդի և Բան» ընդարձակ բանաստեղծությունը: Այստեղ գտնում ենք սուր ու մերկացնող տողեր, ուղղված տիրապետող դասակարգի ներկայացուցիչներին և տիրող կարգերի որոշ կողմերին: Օրինակ.

Եւ աստ աղքատն անիրաւի,
Որբոյն շինի դատ յիրաւի,
Հշմարիտն սուտ ասի,
Սակա ոչ ունիլ սակ արծաթի. (էջ 211):

Նշենք, սակայն, որ հոգևորականության ու ազնվականության խաթարված բարքերը, տիրող կարգերի որոշ կողմերը քննադատող ոչ միայն տողեր, այլև ամբողջ էջեր ունեն ժամանակի մյուս մեծերը ևս՝ Ներսես Շնորհալին, Ներսես Համբրոնացին, Մխիթար Գոշը և այլք: Այդ էջերը չափազանց արժեքավոր են մեզ համար թեկուզ այն պատճառով, որ իրենք տիրապետող դասակարգի ներկայացուցիչներն ու

մեծ գաղափարախոսներն են քննադատում իրենց իսկ կարգերը: Նրանք հաճախ քննադատում են հոգևորականին ու ավատատիրոջը և պաշտպանում շինականին, սակայն գիտենալու է, որ նրանք այդ անում են եկեղեցին ու ավատակա-նությունը պաշտպանելու և շինականներին զսպելու համար:

Գրիգոր Տղան հայրենասեր բանաստեղծ է. ապացույցը՝ ավելի քան փայլուն, ավելի քան պերճախոս՝ «Ողբ Երուսաղեմի» պոեմն է: Եվ Աս. Մնացականյանի ուսումնասիրության այն էջերը, որոնք նվիրված են պոեմի քննությանը այդ տեսակետից, խոր վերլուծության ու ճշմարիտ եզրահանգումների էջեր են: Երուսաղեմի ողբը, անշուշտ, շատ կողմերով իր վրա կրում է Եղիսիո ողբի ազդեցությունը. ստեղծագործական ձևի մտահղացումն իսկ առնված է Շնորհալուց: Սակայն Գրիգոր Տղայի գործը չպետք է բնորոշվի այս կրավորական հանգամանքներով միայն: Տղայի պոեմն ունի նաև ներգործող ուժ, լիցքավորող տարերք, որ կազմակերպում է, թշնամուն դիմագրավելու ոգի ներարկում, նրան հաղթելու վճռականություն հաղորդում:

Ժամանակի գեղագիտական տիրապետող ըմբռնման համաձայն բանաստեղծության հիմնական արժեքը նրա բարոյագիտական ու կրոնա-խրատական բովանդակությունն է: Հիմնականում այդպիսին է մեր բանաստեղծության բովանդակությունը մինչև ուշ միջնադար: Սակայն ասացինք արդեն, որ եկեղեցին որքան էլ ջանար, այնուամենայնիվ, չէր կարող բոլորովին արգելակել իրական աշխարհի մուտքը բանաստեղծություն: Առևտրի, արհեստագործության, զրամական հարաբերությունների, վայելքի ու հեշտանքի կանչող գործոնների, ընդհանրապես քաղաքային կյանքի դարպացմանը զուգընթաց ու սոցիալական լարված հարաբերությունների մղումով նույն այդ կյանքը, որ իր արտահայտությունն էր գտել եկեղեցու պաշտոնական գրականության մեջ (ճառեր, քարոզներ, վարքեր, մեկնություններ, թղթեր, դատաստանագրքեր և այլն), չէր կարող այս կամ այն չափով չթափանցել նաև պաշտոնական բանաստեղծության մեջ: Ուրեմն, այս կամ այն չափով պետք է աշխարհականանար նաև այս բանաստեղծությունը. ասում ենք նաև, որովհետև ժողովրդական-գոյսական բանաստեղծությունը աշխարհիկ էր միշտ: Նշված բանաստեղծության աշխարհականացումը տեական պրոցես է: Գրիգոր Տղան այդ պրոցեսի սկզբում կանգնած բանաստեղծներից է: Իրական աշխարհը նոր-նոր միայն թափանցում է նրա բանաստեղծության մեջ. թափանցում է երկու կողմով՝ սո-

ցիալական, որի մասին խոսեցինք, և սիրո (հայրենասիրությունը շարժվել է համարել պաշտոնական բանաստեղծությունը աշխարհականացնող ցուցիչ, որովհետև այն կա դրա մեջ սկզբից)։ Երկու խոսք սիրո մասին։ Գրիգոր Տղան խոստովանում է, որ «...դրունք կենդանական զգայությունըս իմոյ փակեալ են» (էջ 381)։ Փակել է ինքը, որպեսզի չխաբեն «...զիս բնութեանս կրիցն հարկապահանջ մտածութիւնքն» (էջ 396)։ Բայց սա վկայում է նրա ներաշխարհում տեղի ունեցող ալեկոծումների, պայքարի մասին։ Մի կողմից նրա աստիճանը, դիրքը, կոշումը պահանջում են, որ փակի աշխարհիկ կյանքի հետ հաղորդակցող զգայութեան դրունքը, մյուս կողմից՝ կա «բնութեանս կրիցն հարկապահանջ մտածութիւնքն»։ Եվ որքան բանաստեղծը ջանում է ամուր փակել առաջինը, այնքան համառորեն իրեն զգացնել է տալիս երկրորդը։ Այս պայքարում հաղթում է հոգին, և ոչ մարմինը, — դարաշրջանի բանաստեղծության համար բնութագրականը դա է, — բայց զգացվում է, որ ուր որ է նա տեղի է տալու, որովհետև բանաստեղծի հոգու մեջ

Կայ և հուր սիրոյ,

Բայց սառուցեալ է (էջ 180)։

Այս սերը առ աստված սերը չէ։ Գրիգոր Տղայի սերը առ աստված սառուցեալ չէ, վկայում է ինքը՝ «Ջերմ եմ առ աստուած» (էջ 180), Ուրեմն, դա զուտ աշխարհիկ սերն է։ Սակայն ինչի վրա պետք է դնել շեշտը՝ սիրո, թե՞ սառուցի։ Հրավառ սեր է, թեկուզ և սառուցյալ, թե՞ սառուցյալ է, թեկուզ և հրավառ սեր։ Նախորդ շրջանի մեր բանաստեղծության մեջ չկա այդ սիրը, թեկուզ և սառուցյալ, ուրեմն՝ կարող ենք շեշտը դնել հարցադրման առաջին կետի վրա։ Սակայն անկախ դրանից նշելի է հետևյալը. հուրն ու սառուցը հակադրություններ են, իրար ժխտող, իրար հետ պայքարող։ Բայց դա հենց բանաստեղծի հոգու ու նաև բանաստեղծության մեջ տեղի ունեցող պայքարի արտահայտությունն է։ Ի՞նչ չափով կգիմանա սառուցը ու որքա՞ն ժամանակ, դժվար է ասել։

Սակայն «Սէր աշխարհիս պատաղէ զիս» (էջ 335), և սառուցը պետք է տեղի տա, սկսելու է հալվել, որովհետև հուրն ու սառուցը իրար կողքի երկար մնալ չեն կարող։ Ու հալվել սկսվող այդ սառուցից առաջացած կաթիլներն են, որ զնալով պետք է հորդանան ու դառնան երզնկացի, Բլկուրանցի, Ֆրիկ, Սայաթ-Նովա, դառնան «մարդկային ողու այն ամենանշանավոր հաղթանակներից մեկը, որ ընդհանրապես ծանոթ է համաշխարհի պատմությանը»⁵։ Հայկական միջնադարյան քնարերգության մեջ Գրիգոր Տղա բանաստեղծը, որ թեև մի հատիկ է, բայց ոչ առանց փայլի, արդեն գտնելու է իր տեղը։

Աս. Մնացականյանը իր ուսումնասիրության մեջ զգալի տեղ է հատկացրել նաև Գրիգոր Տղա եկեղեցա-քաղաքական գործչին։ Այստեղ չենք անդրադառնա ո՛չ Գրիգոր Տղայի գործունեության այդ կողմին, և ո՛չ էլ Աս. Մնացականյանի տված գնահատականներին, վերասպահելով դա հրատարակության պատրաստվող մեր ուսումնասիրությանը։ Նշենք միայն, որ այդտեղ արտահայտված առանձին մտքեր առարկելի են։

Մենք անդրադարձանք մի քանի հարցի, այն էլ հպանցիկ, գրախոսության ընձևած սահմաններում։ Ավելի հանգամանալի բնութայությունը, անկասկած, ուսումնասիրողին հասցեագրվող դրվատանքի խոսքերի շատ ավելի առիթ ու հիմք կտար, թեև կտար, ինչպես տեսանք, նաև մտքերի փոխանակության առիթ։ Սակայն անկախ դրանից, ընթերցողը փակում է գիրքը համակված շնորհակալության զգացումով ուսումնասիրող-հրատարակչի նկատմամբ, այն լավ ու արժեքավոր գործի համար, որ արվել է. հրապարակ է հանվել գրեթե մոռացված, համարյա անհայտ նշանավոր մի բանաստեղծ, որով բացվել է հայ միջնադարյան գրականության մի անհայտ էջ, ու գրվել է հայ միջնադարյան գրականության պատմության մի նոր էջ։ Երկուսի համար էլ պարտական ենք պրոֆեսոր Աս. Մնացականյանին։

Խ. ԹՈՐՈՍՅԱՆ

А. Л. ЯКОБСОН, *Крым в средние века (серия «Из истории мировой культуры»)*, М., 1973, 172 стр., 33 черно-белые репродукции, 14 зарисовок, 1 историческая карта средневекового Крыма, цена 55 коп.

Богатая событиями история Крымского полуострова издавна привлекала внимание ученых — историков, археологов, искусствоведов. Это вполне понятно, ибо земля Крыма хранит многочисленные следы

культур различных народов и таит еще много неразгаданного.

В древнейшие времена здесь жили тав-

⁵ «Поэзия Армении, под ред. В. Брюсова», Ереван, 1966, էջ 71։